

Հենրիկ Ս. Սվազյան  
պատմ. գիտ. դոկտոր

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

### «Ուշ աղվանների» առասպելը\*

1918-ին միայն պատմության թատերաբեմում հայտնված «Ադրբեջան» պե-  
տության և դրա հիման վրա «ադրբեջանցի» արհեստածին անունը ստացած կով-  
կասյան թաթարների համար որևէ կերպ հնարավոր չէր գտնել Լեռնային Ղարա-  
բաղի և հայկական այլ տարածքների բռնազավթման «պատմական հիմնավորում»՝  
Հայաստանի ու հայ ժողովրդի բազմադարյան պատմության հետ համեմատու-  
թյան ճանապարհով:

Ուստի, Խորհրդային Ադրբեջանի պատմաբանները ընդօրինակեցին նույն շր-  
ջանից քեմալական Թուրքիայում ևս լայն տարածում գտած՝ պատմության թատե-  
րաբեմից անհետացած ժողովուրդների պատմությունը յուրացնելու կեղծարարա-  
կան հնարանքը: Եթե թուրքերը այս նպատակով օգտագործում էին խեթերին կամ  
ուրարտացիներին, ապա ադրբեջանցիները իբրև «սեփական նախնիներ» ընտրե-  
ցին արաբական արշավանքների շրջանում՝ 8-րդ դարից, պատմության թատերա-  
բեմից անհետացած Բուն Աղվանքի ցեղերին: Ուստի, ընդլայնելով այդ պատմա-  
կան երկրի սահմանները և դրանք արհեստականորեն համապատասխանեցնելով  
Ադրբեջանական ԽՍՀ-ի զբաղեցրած տարածքի հետ, առաջ քաշվեց «ինչ աղվա-  
նական է, ուրեմն ադրբեջանական է» սկզբունքը: «Ադրբեջանցի» հորջորջվող կով-  
կասյան թաթարների ժառանգներին դա թույլ էր տալիս նախ՝ ստեղծել ողջ միջնա-  
դարը և անգամ՝ հին աշխարհն ընդգրկող մի վիրտուալ պատմություն և երկրորդը՝  
թաքնվելով աղվանացիների, կամ իրենց հորջորջմամբ՝ աղվանների թիկունքում,  
Արցախը ներկայացնել որպես Աղվանից աշխարհի մարզ, որն իբր՝ «ժառանգա-

2009  
հոկտեմբեր-դեկտեմբեր  
թիվ 3(28)

ԿԵՄ  
համահայկական համադաս

\* «Վեմ»-ը «ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ» ընդհանուր խորագրով նախածեռնում է գիտական հրապարակումների շարք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմության այն հիմնահարցերի վերաբերյալ, որոնք առավել հետևողականորեն են խեղաթյուրվում արդի ադրբեջանական պատմագրության կողմից: Օտարալեզու հրապարակումների միջոցով՝ համաշխարհային համացանցը ողողած նման «նյութերը» պաշտոնական Բաքվի համար դարձել են հասարակական կարծիքի ապակողմնորոշման եղանակներից մեկը: Խմբ. Հոդվածն ընդունվել է տպագրության 15.09.2009.

բար» փոխանցվել է Ադրբեջանին ոչ միայն վարչականորեն, այլև պատմականորեն, իրավաբանորեն, էթնիկապես ու մշակութապես: Ունենալով ԽՍՀՄ ժողովուրդների պատմության համահարթեցմամբ զբաղվող խորհրդային կենտրոնական իշխանությունների խրախուսանքը, ադրբեջանցի պատմաբանները սկսեցին Բուն Աղվանքի պատմությունը շարադրել արհեստականորեն ուռճացած սահմաններով՝ հարավում այն Կուր գետից<sup>1</sup> հասցնելով մինչև Արաքս և նրանում ընդգրկելով Հայկական Ուտիք և Արցախ նահանգները: Այստեղի հայությանը համարելով հայացած աղվանացիներ (ըստ ադրբեջանցիների՝ «աղվաններ», դրանով նրանք փորձեցին վերջիններիս անվանը հաղորդել էթնիկական բնույթ<sup>2</sup>), Ուտիքում ու Արցախում կամ որ նույնն է՝ Հայոց Արևելից կողմերում ապրած ու ստեղծագործած հայ էթնիկական ծագման պետական, հասարակական ու մշակույթի գործիչներին անխտիր հայտարարել ծագումով «աղվաններ»<sup>3</sup>, իսկ նրանց ստեղծագործությունները՝ իբր «պատմական Ադրբեջանի» ժառանգությունը հանդիսացող, գոյություն չունեցող աղվանական գրականության նմուշներ: Այդպիսի հայտարարություններով փորձ արվեց յուրացնել պատմիչներ Մովսես Կաղանկատվացուն, Կիրակոս Գանձակեցուն և Վանական Վարդապետին, բանաստեղծ Դավթակ-Քերթոզին, հայկական գրավոր օրենսդրության հիմնադիրներ, «Դատաստանագրքերի» հեղինակներ Դավիթ Աղավկաորդուն, Մխիթար Գռչին և շատ ուրիշների: Այս հակազիտական մոտեցումները ժամանակին իրենց պատշաճ հակահարվածը ստացան հայ պատմաբանասիրական մտքի կողմից (Կ. Մելիք-Օհանջանյան, Ա. Շ. Մնացականյան, Բ. Հարությունյան, Հ. Ս. Սվազյան, Ա. Հակոբյան և ուրշներ<sup>4</sup>), ցույց տրվեց ադրբեջանցի հեղինակների որդեգրած «ուսումնասիրության» նման «մեթոդի» արատավորությունը, բացահայտվեցին պատմության մեջ հայ ժողովրդի դերը բացառելու նրանց բնորոշ միտումները: Այնուհանդերձ, իր հետ որևէ կապ չունեցող «Ադրբեջան» անվամբ հանդես եկող երկրի<sup>5</sup> պատմության «հնեցման» նման դիտավորությունները շարունակվում են նաև մեր օրերում և պետական հոգածության ներքո վերածվում են ռազմավարական գործոնի: Դրա հերթական վկայությունն է 2005թ. Բաքվում ռուսերենով լույս տեսած՝ ոչ անհայտ Ֆարիդա Մամեդովայի «Կովկասյան Ալբանիան և ալբանները» մենագրությունը<sup>6</sup>, որն ըստ էության հեղինակի մինչ այդ կատարած կեղծիքների լրացված և հարևան երկրի ու ժողովրդի պատմության հանդեպ նորանոր ասպատակություններ պարունակող մի «աշխատություն» է: Այն ընդգրկում է ընդարձակ ժամանակաշրջան՝ մ.թ.ա 3-րդ դարից մինչև մ.թ. 19-րդ դարը ներառյալ:

1 Դ.Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 54-79:

2 «Աղվանք» տեղանունը առաջացել է հայերեն «աղու» («քաղցր», «դուրեկան», «հաճելի») բառից, որ տրվել է երկրին նրա բարենպաստ բնակլիմայական պայմանների համար: Հետևաբար այն էթնիկական ծագում չունի: Դրան համապատասխան էլ նրա բնակիչներին ճիշտ կլինի անվանել «աղվանացիներ» (տես Դ.Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 51-53) և ոչ թե «աղվաններ», որը ենթադրում է էթնիկական ծագում:

3 Այստեղ և այսուհետև «աղվաններ» հասկացությունը վերցնելով չակերտների մեջ, ընդգծում ենք աղվանական ցեղերի համար նրա ոչ ճիշտ գործածությունը ադրբեջանցիների կողմից:

4 Խնդրին անդրադարձած հեղինակների ու նրանց աշխատությունների ամբողջական քննարկումը տես Դ.Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 39, ծանոթ. 159, էջ 45, ծանոթ. 181:

5 В.В. Бартольд, Краткий обзор истории Азербайджан, Сочинения, т. II, ч. I, Москва, 1963, էջ 775: 6 Ф. Мамедова, Кавказская Албания и албаны, Баку, 2005 (798с.):

Հեղինակը մ.թ.ա. 3-րդից 8-րդ դարերի Աղվանքի քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մի շարք այլ հարցերի «լուսաբանումից» հետո անցնում է իր հորինած՝ «ուշ աղվանների («поздние албаны<sup>7</sup>») 9-19-րդ դարերի պատմության վերհանմանը: Ֆարիդա Մամեդովայի կարծիքով՝ այդ ձևով նա լրացրել է 8-րդ դարից մինչև 19-րդ դարն ընկած ժամանակների միջև առաջացած «բացը և վերականգնել վաղմիջնադարյան Աղվանքի, պատմական Աղրբեջանի<sup>8</sup>, ինչպես նաև աղվանների պատմությունը մինչև 1836թ.»<sup>9</sup>:

Բայց, քանի որ վաղմիջնադարյան Աղվանքի պատմությունն ընդհատվել է արաբական արշավանքների հետևանքով, իսկ ահա «պատմական Աղրբեջան» հասկացությունը պարզ նոստեն է, Աղվանքի պատմության մեջ 8-րդ դարից հետո գոյացած «հավերժական բացը» լրացնելու համար Ֆ. Մամեդովան յուրացնում, իսկ ավելի ճիշտ՝ գողանում է հայկական Ուտիք-Արցախում կամ Հայոց Արևելից կողմերում ծավալված պատմական իրադարձությունները: Չբավարարվելով այդքանով ու ավելի հեռուն գնալով՝ նա ընդգծում է «ուշ աղվանների» դերը նաև Կիլիկյան թագավորության մեջ ու լրության մատնելով այդ թագավորության հայկական լինելու անհերքելի իրողությունը, թեթևորեն Լամբրոնի իշխան Օշին Հեթումյանին դարձնում է նրանցից մեկը<sup>10</sup>: Այսպիսի աճպարարությունների հիմնապատասխան վրա պարզապես զավեշտալի է հնչում հեղինակի այն ինքնագոհ հայտարարությունը, թե իր աշխատությանը «վերականգնված է Աղվանքի ու աղվանների մ.թ.ա. III-XIX դարերի պատմությունը»<sup>11</sup>: Այնհայտ է, որ Ֆ. Մամեդովայի որդեգրած «մեթոդով» կարելի է «վերականգնել» ինչ ուզես և ում ուզես:

Ֆ. Մամեդովային քիչ է թվացել նաև արդեն «աղվան» հայտարարված հայ պատմիչների ու հասարակական գործիչների շարքը: Եվ քանի որ ախորժակը ուտելիս է բացվում, ուստի իր նոր աշխատությունում նա արդեն աչքադրել է նաև Սմբատ Սպարապետի, Հեթում պատմիչի, Վարդան Արևելցու (որին կցում է «Աղվանեցի» ածականը), Ստեփանոս Օրբելյանի (որի ազգանունը նշում է առանց «յան» մասնիկի, թերևս կարծելով թե այդ ձևով նրան զրկում է հայկական պատկանելությունից), Գրիգոր Մաղաքիայի, Եսայի Հասան Ջալալյանի, Ներսես Լամբրոնացու, Մակար Բարխուտարյանցի ու նրանց ստեղծագործությունների վրա:

7 Խնդիրը կայանում է նրանում, որ աղվանական ցեղերի խայտաբղետությունը, մինչև վերջ անհաղթահարելի մնացած լեզվական տարբերություններն ու մեկ միասնական լեզու և այդ լեզվով գրականություն ու, ընդհանրապես մշակույթի գործեր չունենալը, տնտեսական ու քաղաքական գործոնները, հանգեցնում են աղվանական ցեղերի ծուլմանը և պատմության ասպարեզից դուրս գալուն: Նրանց ծուլումն սկսվում է արաբական նվաճումներով՝ 7-8-րդ դարերում, և այնքան արագ է ընթանում, որ 8-րդ դարից հետո, «աղվանացիներ» որպես այդպիսին այլևս գոյություն չունենին: /Տես, Գ. Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 84/: Այնուամենայնիվ Ֆ. Մամեդովան չի ուզում հաշտվել նրանց վերջնականապես անհետացման մտքի հետ և եթնիկապես աղվանական ցեղերի հետ ոչ մի առնչություն չունեցող Ուտիքի ու Արցախի հայ բնակչությանը կոչելով «ուշ աղվաններ» արհեստածին տերմինով, փորձում պատկերել վերջիններիս «հինգ մեկթույնությունների ու մնացածների» պատմությունը՝ ընդհուպ 19-րդ դարը ներառյալ /Փ. Мамедова, նշվ. աշխ., էջ 3/

8 «Պատմական Աղրբեջան» տերմինը և արհեստածին է: Այն հորինված է «Պատմական Հայաստանին» համարժեք հասկացողություն ստեղծելու նպատակով, որը Աղրբեջանի դեպքում ամենևին էլ տեղին չէ:

9 Փ. Мамедова, նշվ. աշխ., էջ 10:

10 Նույն տեղում, էջ 414-415: Օշինի հայրենական կալվածքը «Մայրեաց ջուր» վայրն էր Ուտիքի Շակաշեն գավառում՝ «հանդեպ Գանձակայ» /Տես, Սամուելի քահանայի Անեսույ Հալաբյունը ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 117/: Այս տեղանվամբ արձանագրություններ են գտնվել Հակարի գետի վերնահովտում /Աղբրածոր/, որոնք իրատարակել է Ա. Հակոբյանը՝ Տես Հակարիի վերնահովտի նորահայտ վիճագրերը, Հանդես Ամսօրեայ, Վիեննա 1998, էջ 301 և հաջ./: 11

11 Փ. Мамедова, նշվ. աշխ., էջ 10:

Բնավ չանսալով ողջամտության ձայնին, Ֆ. Մամեդովան թվարկվածներին համարում է աղվանացիներ, իսկ նրանց երկասիրությունները՝ աղվանական գրական հուշարձաններ<sup>12</sup>: Դա ապացուցելու համար հիմքեր չունենալով, նա պարզապես հայտարարում է, թե այդ ստեղծագործությունները հայ հոգևորականների կողմից փոխարկվել են հայերենի, «հայկական ավանդույթի ուժով» յուրացվել են հայերի կողմից, իսկ մի մասն էլ՝ ոչնչացվել<sup>13</sup>: Եվ որպես դրա «վառ» ապացույց նա մատնանշում է Մակար Բարխուտարյանցի «Արցախ» աշխատությունը, որն, ըստ նրա, կրում է իր կողմից նշած փոխակերպումների կնիքը<sup>14</sup>: Այսպես, նա բերում է այդ հայ հոգևորականի՝ Շամախու եկեղեցու քարոզչի, ի ցավ սրտի ասված խոսքերը Արցախի մասին. «դեռ 1858-ին շեն և պայծառ եղած են վանքերս, ինչպես վկայում են ականատեսներն: ...Բայց հայտնի է, թե Աղուանից կաթողիկոսութեան մահից հետո, այս է 1828 թվականից հետո վանքերն հետզհետե սկսած են գրկվիլ և անգավականալ միաբանական խմբերից և անխնամ մնալով քայքայվիլ մեծ մասամբ»<sup>15</sup>: Այս և նմանատիպ ևս երկու քաղվածքներ բերելով<sup>16</sup>, Ֆ. Մամեդովան փորձում է հաստատել իր «ճշմարտացիությունը»: Բայց թե բերված և այլ տողերից ինչպե՞ս է Ֆ. Մամեդովան բխեցնում իրեն ցանկալի հետևությունը, պարզ չէ:

Մինչդեռ Մ. Բարխուտարյանցը իր գրքում գրելով, որ «սրտածնիլի դրության մեջ է ընկնում հետագոտող հայն (որ ինքն է-Հ.Ս.), երբ տեսնում է միլիոնավոր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկված»<sup>17</sup> կամ յուր երկասիրությունները «իբրև մի ծաղկեփունջ մվիրելով հայ գրականության և իբրև մի ամենակարևոր նյութ հայ պատմության»<sup>18</sup>, ի հեճուկս Ֆ. Մամեդովայի հանդես էր գալիս որպես հայկական մշակույթի ու հայոց պատմության ճակատագրով մտահոգված մի հայ: Եվ, վերջապես, Մ. Բարխուտարյանցը իր «Արցախ» գիրքը սկսում է «Մեծ Հայոց 15 նահանգներից մեկն է Արցախն»<sup>19</sup> տողերով, որով ընդգծում է Արցախի հայկական նահանգ լինելու փաստը: Հետևաբար հայ հեղինակի մասին Ֆ. Մամեդովայի նման կարծիքը, ավելի քան վառ երևակայության արդյունք է և իր տեսակով պատկանում է այն մեռելածին ժամրին, որն ընդունակ է սերելու ադրբեջանական պատմագիտական միտքը<sup>20</sup>:

Այսպիսի մոլեռանդությանը հականե հանվանե թվարկելով «աղվանական» ծագմամբ մշակույթի, գրականության ու հասարակական գործիչներին, հեղինակը հաշիվ տվե՞լ է իրեն, թե ինչպես է, որ «դարերով ստեղծված» «աղվանական հարուստ գրականություն» կերտողները միայն Կուրի աջափնյակում ապրած և ստեղծագործած անվանի գործիչներն էին: Ինչու՞ ձախափնյակը չունի իր ներկայացու-

12 Նույն տեղում, էջ 7, 69, 414:

13 Նույն տեղում, էջ 117-123:

14 Նույն տեղում, էջ 123:

15 Արցախ, երկասիրեց Մակար եպիս. Բարխուտարեանց, Բագու, 1895, էջ 5 /հետագայում՝ Արցախ/:

16 Փ. Мамедова, նշվ. աշխ., էջ 123:

17 Արցախ, էջ Ը:

18 Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք /միջին Դաղստան, Թիֆլիս, 1893, էջ Բ:

19 Արցախ, էջ 1:

20 Դեռ նրանից առաջ կեղծարարության գծով նրա ավագ գործընկերներն էին գտնում, թե «աղվան» պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը» նախապես գրված է եղել զարգարենեն, ապա թարգմանվել հայերեն /Յ. И. Ямпольский, К изучению Летописи Кавказской Албании, Известия АН Аз ССР, 1957, թիվ 9, էջ 154/, իսկ բնագիրը՝ ոչնչացվել /Յ.М. Бунятов, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, էջ 97/:

ցիչը այդ պատկառելի ցուցակում: Դա պերճախոս վկայությունն է այն իրականության, որ Կուրի աջ ու ձախ կողմերում ապրում էին տնտեսական, քաղաքական ու հասարակական զարգացմամբ միմյանցից բոլորովին տարբեր էթնիկական խմբեր: Ուստի հավասարեցման և ոչ մի եզր չի կարող լինել գետի աջ ու ձախ կողմերում ապրող ժողովուրդների միջև, «աջակողմյանների» ստեղծած բարձրակարգ հոգևոր մշակույթը չէր էլ կարող լինել «ձախակողմյանների» սեփականությունը: Իսկ աջափնյակում, չնայած աղբբեջանցի հեղինակների ամեն ինչ գլխիվայր շուռ տալու փաստին, ընկած էին հայկական Ուսիք ու Արցախ նահանգներն իրենց հայ բնակչությամբ: Հետևաբար՝ վերջիններիս էլ պատկանում էր այն մշակույթը, որի հայագրի ստեղծողներին յուրացնելու փորձեր է անում հեղինակը:

Նույնը կրկնվում է նաև միջնադարյան Արցախի պատմության բազմաթիվ անհատ գործիչների հետ: Արցախն ու Ուսիքը (Սյունիքի հետ մեկտեղ) քմահաճորեն դիտելով որպես բուն Աղվանքի մարզեր, Ֆ. Մամեդովան նրանց հզորացումը 9-րդ դարում համարում է աղվանական թագավորությունների վերածնունդ<sup>21</sup>, իսկ նրանց տիրակալներին՝ ոչ հայեր: Դա առաջին հերթին վերաբերում է Արցախ-Խաչենի Եռանշահիկ կամ Առանշահիկ իշխան Սահլ Սմբատյանին, որին արաբները կոչում էին Սահլ իբն Սինբաթ՝ Սմբատի որդի Սահլ: Վերջինիս հայկական ծագման «ժխտմամբ» հանդես է եկել դեռևս աղբբեջանական կեղծարարությունների «դասական» Ջ.Բունիաթովը: Վկայակոչելով Մովսես Կաղանկատվացու այն հաղորդումը, թե Սինբատյան տոհմից Քաջ Վարդանը Առանշահիկների հին հայկական զարմից կոտորել է վաթսուն հոգու և կենդանի է թողել միայն իրենց փեսայացած Չարմիր Եռանշահիկին<sup>22</sup>, նա, հակառակ սրանից բխող այն պարզ հետևության, թե սույն Չարմիրը հայկական իշխանական տնից էր, ուրեմն՝ հայ էր, որպիսիք կլինեին բնականաբար նաև նրա սերունդները, մասնավորապես՝ Սահլ Սմբատյանը, առանց տատանման գրում է. «Մեջբերվածը հարկադրում է ժխտել Սահլ իբն Սմբատի հայկական ծագման մասին վարկածը»<sup>23</sup>: Աղբբեջանների նկատմամբ նման վերաբերմունքը (կարդալ մի բան՝ եզրակացնել ուզածը) միանգամայն հասկանալի է դարձնում, թե ինչու՞ է Ֆ. Մամեդովային սրտամոտ սույն հարցի կապակցությամբ Ջ. Բունիաթովի հայտնած կարծիքը: Ուստի փառաբանելով նրան, Ֆ.Մամեդովան գրում է. «Ջ. Մ. Բունիաթովը միանգամայն իրավացիորեն ժխտում է Սահլ իբն Սմբատի հայկական ծագման մասին գիտնականների կարծիքը»<sup>24</sup>:

Ավելին, ձգտելով հաստատել այս հակապատմական թեզը, Ֆ. Մամեդովան դիմում է բացահայտ կեղծիքի՝ հայտարարելով, թե Կաղանկատվացու մոտ ոչ մի տվյալ չկա Սահլի հայ լինելու մասին<sup>25</sup>: Ճիշտ հակառակը՝ պատմիչն այդ մասին ունի տվյալներ և այն էլ մեկից ավելի: Դրանցից նախ նշենք նրա հաղորդումը Չարմիր Եռանշահիկի մասին. «(Քաջ Վարդանը-Հ.Ս.),-գրում է Կաղանկատվացին,-նենգեալ ի սիրտ իւր գնախնական ազգն Հայկազնեանց՝ Եռանշահիկս...: Արար գլխատումն արանց վաթսունից, միայն թողոյր ի նոցանէն գփեսայացեալն

21 Փ. Мамедова, նշվ. աշխ., էջ 391:  
 22 Կաղանկատվացի, էջ 172: Բնագիրը՝ բառացիորեն տե՛ս ստորև:  
 23 Յ.М. Бунятов, Азербайджан..., էջ 185:  
 24 Փ. Мамедова, նշվ. աշխ., էջ 391:  
 25 Նույն տեղում, էջ 391-392:

իրում ցեղին Չարմիրն Եռանշահիկ»<sup>26</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ բավականին հստակ ասվում է, որ Չարմիրը հայ էր, հայկական հինավուրց տոհմից, և ուրեմն, հայեր կլինեին նմանապես նրան հաջորդած բոլոր Եռանշահիկ-Առանշահիկները: Նման մի Առանշահիկ էր նաև Սահլ Սմբատյանը, որի մասին վկայում է նույն ինքը՝ Կաղանկատվացին՝ նրան բնորոշելով «Արի և շքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանշահիկն տէր»<sup>27</sup> բառերով: Հետևաբար, լինելով Առանշահիկ՝ նա ևս իր նախնու նման կունենար հայկական ծագում: Սահլ Սմբատյանի հայկական ծագումը ուղղակի ձևով հաստատում է պատմիչը իր մի այլ հաղորդմամբ: Խոսելով Միհրանյան և Առանշահիկ տոհմերի խնամախանալու մասին, որի ժամանակ առաջինների դուստր Սպրամը ամուսնանում է Ատրներսեհ Առանշահիկի հետ, Կաղանկատվացին ծանուցում է, որ վերջինս Սահլի որդին էր, այն Սահլի, «որ էր ի տոհմէն Հայկայ»<sup>28</sup>: Հայտնի է, որ Հայկը հայ ժողովրդի անվանադիր նախնին է և լինելով նրա տոհմից՝ նշանակում է լինել հայ: Ուրեմն՝ Ֆ. Մամեդովայի արդարացումը, թե Կաղանկատվացու մոտ տվյալներ չկան, ակնհայտ աչքակապություն է: Բայց, եթե Ֆ. Մամեդովային հասու չի եղել հայ պատմիչի հաղորդումների իմաստը, ապա ավելորդ չենք համարում նրան հիշեցնել նաև իր իսկ կողմից օգտագործված արաբական աղբյուրների տվյալները: Բոլոր արաբ հեղինակները (Իբն ալ-Ասիր, ալ-Դինավարի, Յակուբի, Տաբարի և ուրիշներ), որոնց հագիվ թե աղբրեջանցի հեղինակները հիմք ունենան մեղադրելու կանխակալության մեջ, Սահլ Սմբատյանի կողմից Բաբելին ձերբակալելու մասին խոսելիս նշում են որ Բաբելը փախել-թաքնվել էր Հայաստանի լեռներում<sup>29</sup>: Դա իմանալով՝ արաբ ոստիկան Աֆշինը գրում է տեղի, այն է՝ Հայաստանի, իսկ ըստ Տաբարիի ավելի որոշակի հաղորդման՝ «Հայոց իշխաններին և մեծամեծերին»<sup>30</sup> ու կարգադրում բռնել ապստամբին ու հանձնել իրեն<sup>31</sup>: Համաձայն արաբ հեղինակների միահամառ տեղեկությունների, դա իրականացնում է «բատրիկ» Սահլ իբն Մինբաթը<sup>32</sup>: Նույն աղբյուրները Սահլի անվան կողքին դնում են հայագգի նշանակությունն ունեցող՝ «ալ-Արմանի» անվանը /Սահլ իբն Մինբաթ ալ-Արմանի/<sup>33</sup>:

Ուրեմն՝ արաբ հեղինակների պատմություններից նույնպես պարզ երևում է, որ Սահլը հայ էր, հայոց իշխան և նրան այլ ազգային պատկանելություն վերագրելը ուղղակի իրականության խեղաթյուրում է<sup>34</sup>: Բայց ըստ Մ. Կաղանկատվացու՝ հայեր էին նաև ողջ Հայոց Արևելից կողմանց իշխանները. «Ստուգաբանութեամբ այսպէս ծանեաք, գրում է պատմիչը, ընդ Հայկազանց արանց խնամատրիլ Միհրական տոհմին, և պատուաստութեամբ սայսուիկ առ ի գոյզ ունել զպետութիւն

26 Կաղանկատվացի, էջ 172 /ընդգծ. Գ.Ս./:

27 Նույն տեղում, էջ 326:

28 Նույն տեղում, էջ 340 /ընդգծ. Գ.Ս./:

29 Իբն ալ-Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 142, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, Ներածությունը և բնագրից թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 218, 281, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Հավաքեց և թարգմանեց Բազրատ Խալաթյանց, Վիեննա, 1919, էջ 95:

30 Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, էջ 95

31 Նույն տեղում:

32 Նույն տեղում:

33 Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, էջ 221, ծանոթ. 23:

34 Ի դեպ արաբական աղբյուրների մի մասը թարգմանել և հավելվածի տեսքով իր գրքում զետեղել է Չ. Բունիյաթովը /Տես, Азербайджан в VII-IX вв., էջ 324-329/, սակայն, նույնիսկ դա նրան չի մղել ուղղամտության:

արևելեայց կողմանց Ադուանից (իմա՝ Հայոց Արևելից կողմանց-Հ.Ս.)<sup>35</sup>»։ Պարզից էլ պարզ է, որ այս հաղորդմամբ մատնանշվում է, որ հիշյալ կողմերում հայեր էին իշխում, որոնց հետ էլ Սիիրանյանները խնամիանալով<sup>36</sup> սկսում են համատեղ վարել իշխանությունը։ Սակայն, Ֆ. Մամեդովան հավատարիմ իր ժխտողական պահվածքին, այս հաղորդումը համարում է ուշ շրջանի ընդմիջարկություն կամ խմբագրական միջամտություն, այնպիսի պատճառաբանությամբ, թե իբր տվյալ հաղորդումը հակասում է «Պատմութիւն Ադուանից» երկի նյութին ու տրամաբանությանը<sup>37</sup> (ավելի ճիշտ կլիներ ասել՝ իր ցանկություններին) և այդպես էլ իրեն ներդրություն չտալով՝ վերհանել այդ հակասությունները։

Ի շարս այլ հարցերի՝ Ֆ. Մամեդովան անդրադարձել է նաև Արցախ-Խաչենի, նրա խոսքերով ասած՝ «աղվանական իշխանություն-թագավորությանը»։ Մինչդեռ, Արցախ-Խաչենը 10-րդ դարում հիշատակվում է բյուզանդական կայսր Կոստանդին Ծիրանածինի «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» աշխատությունում՝ Հայոց այն երկրների շարքում, որոնց հետ կայսրությունը դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել և նամակագրական կապ ուներ։ Նամակները հասցեատերերին ուղարկվում էին արարողակարգով սահմանված «այսինչ իշխանին այսինչ տեղ»<sup>38</sup> սկզբունքով և ըստ հասցեատիրոջ ուժի ու հզորության, կնքվում էին արժևորված ոսկե կնիքներով՝ խրիստովալով։ Առաջնորդվելով այսպիսի անխախտ արարողակարգով՝ բյուզանդական արքունիքը երեք սուլիդանոց խրիստովալով<sup>39</sup> նամակներ է ուղարկում Մեծ Հայքի իշխանաց իշխանին (իմա՝ Հայոց թագավորին-Հ.Ս.) և Վասպուրականի իշխանին, որն այս փաստաթուղթը կազմելիս արդեն թագավորի աստիճան ուներ<sup>40</sup> ու սովորական նամակներ՝ ուղղված «Կողովիտի իշխանին, Հայաստան։ Տարոնի իշխանին, Հայաստան։ Մոկքի իշխանին, Հայաստան։ Ավգանի (Աղձնիքի-Հ.Ս.) իշխանին, Հայաստան։ Սյունիքի իշխանին, Հայաստան։ Վայոց ձորի իշխանին, Հայաստան։ Խաչենի իշխանին, Հայաստան։ Սևորդյաց, այսինքն՝ Սև որդիներ կոչվող երեք իշխաններին»<sup>41</sup>։ Քաղվածքը, որ ներկայացվեց այստեղ, աներկբայորեն ցույց է տալիս, որ նամակում հիշատակվածը Հայոց աշխարհն է՝ իր առանձին մարզերով։ Դա հաստատվում է նաև իշխանություններից յուրաքանչյուրի դիմաց հատուկ շեշտված «Հայաստան» բառով։ Սակայն Ֆ. Մամեդովան այս ամբողջական ցանկից անջատում, դուրս է բերում «Խաչենի իշխանին, Հայաստան» կապակցությունը և փորձում համոզել, որ նրան կից «Հայաստան» բառը սոսկ աշխարհագրական հասկա-

35 Կաղանկատվացի, էջ 338:

36 Նկատի ունի Սպրամի ու Ատրներսիի անուսությունը, որով հիշյալ տոհմերը միավորվեցին:/ Կաղանկատվացի, էջ 340/:

37 Փ. Мамедова, նշվ. աշխ., էջ 391:

38 Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք II, գլ. 48 / Տես, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, թարգմ. քննադից, առաջաբան և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151/:

39 Երեք սուլիդանոց խրիստովալով նամակը բարձր արժեք ուներ։ Համեմատության համար տես հասցեատերերի ցանկը՝ նույն տեղում, էջ 150-154:

40 Նրա վերաբերյալ Ծիրանածինը գրում է «որ այժմ իշխանաց իշխանի պատիվ է ստացել /Ծիրանածին, էջ 151/։ Դա Գագիկ Արծրունին էր, որ 908թ. Վասպուրականը թագավորություն հռչակելով դարձավ թագավոր։ Ելնելով կայսեր օգտագործած «այժմ» բառից, Հ. Բարթիկյանը իրավացիորեն գտնում է, որ փաստաթուղթը կազմվել է 908թ. ոչ «չատ անց»։ Տես, նույն տեղում, էջ 311 ծանոթ. 81:

41 Կոնստանտին Ծիրանածին, էջ 151 /ընդգծ. Հ.Ս./:

ցություն է և չի բնորոշում Խաչենի վարչաքաղաքական կարգավիճակը<sup>42</sup>: Գիմեղով մնան քայլի՝ նա սին հույսեր է փայփայում թե այդ եղանակով հիմք է ստեղծում կարծելու, որ Արցախ-Խաչենը Հայաստանի կազմից դուրս էր: Բայց իրականությունն այլ է, քանզի խնդրո առարկա ցանկում, բացի Բագրատունյաց ու Արծրունյաց թագավորություններից, խոսվում է ևս ութ իշխանությունների մասին, որոնց (բացառությամբ Սևորդյաց իշխանության) գտնվելու աշխարհագրական վայր է մատնանշվում Հայաստանը: Սա առանց այլևայլության ամրագրում է, որ ցանկում տեղ գտած բոլոր իշխանությունները հայկական են և Հայաստանի մարզեր: Բացառություն չէր կարող կազմել նաև մյուսների հետ միաժամանակ հանդես եկող Խաչենը: Ուստի, առանձնապես մեծ խորաթափանցություն պետք չէր ունենալ հասկանալու համար, որ Խաչեն-Արցախը՝ որպես Հայոց աշխարհի բաղկացուցիչ մարզերից մեկը, ունենալու էր այն նույն վարչաքաղաքական կարգավիճակը, ինչ որ մյուս հայկական երկրամասերը:

Պարտովելով այն մտքով, թե իբր՝ արդեն լուծել է Խաչեն-Արցախի վարչական պատկանելության հարցը, երևակայությամբ տարված՝ Ֆ. Մամեդովան անցնում է էթնիկական խնդիրներին՝ աղվանացիներին հակադրելով հայերին և իր խոսքը ուղեկցելով հայերի հանդեպ խայթոցներով: Նա գրում է. «Չէ՞ որ աղվանական էթնոսը (առանձին արտագաղթումները և նրա մի մասի բռնի տեղաշարժերը չհաշված), ի տարբերություն հայերի, երբեք չկորցրեց իր տարածքը. մինչև VIII դարը աղվաններն ապրում էին իրենց երկրի ողջ տարածքում, իսկ IX դարից մինչև XIX դարը ներառյալ՝ պատմական Աղվանքի առանձին մարզերում՝ Արցախում, Սյունիքում, Ուտիքում, Շաքի-Կամբեճանում, որտեղ կարողացան ստեղծել, վերածնել քաղաքական կազմավորումներ»<sup>43</sup>: Ապա ինքն իրեն հավատալով՝ նա պնդում է, թե Խաչենն իր «աղվան» բնակչությամբ պատմության ողջ ընթացքում երբեք Հայաստանի մաս չի կազմել նաև էթնիկական առումով<sup>44</sup>:

Երկիրը, որի ողջ տարածքում մինչև 8-րդ դարը ապրել են աղվանացիները, ըստ հունա-հռոմեական և հին ու վաղմիջնադարյան հայկական աղբյուրների, Կուրից հյուսիս մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հարավային Կերաունյան ճյուղն ընկած տարածքն էր, որ ճանաչված էր Բուն Աղվանք անվամբ<sup>45</sup>: Նրա մատնանշած իբրև թե՝ «պատմական Աղվանքի» մարզերից Արցախն ու Ուտիքն էլ Աղվանքի հետ կապվում են այնքանով, որքանով որ լինելով հայկական նահագներ, 5-րդ դարի կեսերից բուն Աղվանքի հետ միասին ձևավորել են մարզպանություն: Վերջինս տարբեր էթնիկական ու վարչաքաղաքական միավորներից միմյանց բռնակացված վարչական մի կառույց էր՝ առանց որևէ ներքին օրգանական կապի և 6-րդ դարի երկրորդ կեսում քայքայվեց<sup>46</sup>: Արցախն ու Ուտիքը վերստացան իրենց ինքնուրույնությունը և շարունակեցին ապրել իրենց նախամարզպանական շրջանի քաղաքական կապակցությամբ: Ինչ վերաբերում է Սյունիքին, ապա այն իր երկարամյա պատմության ընթացքում ոչ մի անգամ և ոչ մի ձևով չի եղել Աղվանքի կազմում<sup>47</sup>: Հետևաբար Ֆ. Մամեդովայի վերոբերյալ դատողությունները Արցախի, Ուտիքի և Սյունիքի մասին որևէ հիմք չունեն:

42 Փ. Мамедова, նշվ. աշխ., էջ 398-402:

43 Նույն տեղում, էջ 401:

44 Նույն տեղում:

45 Դ.Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 54-79:

46 Նույն տեղում, էջ 199-207, 216-221:

47 Նույն տեղում, էջ 38-39:



Նույն պատկերը տեսնում ենք նաև Շաքի-Կամբեճանի դեպքում: Շաքին բուն Աղվանքի տասնմեկ նահանգներից էր, բայց 10-րդ դարում այն կառավարում էին հայ իշխանները: Ըստ հայ (Հովհաննես Դրասխանակերտցի<sup>48</sup>), վրացի (Վախուշտի<sup>49</sup>) և արաբ (Մասուդի<sup>50</sup>) պատմիչների, այդ դարում տեղի թագավորը Ատրներսեհ անունով իշխանն էր: Վերջինս Ատրներսեհ Բ-ն էր՝ Խաչենի տեր Համամի որդին<sup>51</sup>, որը ամուսնացած էր վրաց իշխանաց իշխան Գուրգենի քրոջ՝ Դինարի հետ<sup>52</sup>: Ատրներսեհ Բ-ին փոխարինում է նրա ու Դինար թագուհու որդին՝ Իշխանիկը<sup>53</sup> (կամ ըստ հայկական աղբյուրների՝ Իշխանակը): Այն ժամանակաշրջանում, երբ արաբ պատմիչ Մասուդին գրում էր «Մոտուջ» վերնագրով իր գիրքը (943թ.<sup>54</sup>), Հերեթ-Շաքին արդեն ուներ խառը բնակչություն՝ քաղկացած միաբնակ քրիստոնյաներից, որոնց վրացական աղբյուրները անվանում էին հերձվածողներ<sup>55</sup>, և մեծ թիվ կազմող մահմեդականներից<sup>56</sup>: Իշխանիկը, հորից հետո անցնելով իշխանության գլուխ, մոր ազդեցության տակ հարկադրում է քրիստոնյաներին թողնել միաբնակությունը և ընդունել երկաբնակություն՝ քաղկեդոնականություն<sup>57</sup>. «IX-X դարերում,-գրում է Ն. Մառը,- քաղկեդոնականությունը Հերեթում հաղթանակեց վերջնականապես»<sup>58</sup>:

Այն փաստը, որ Հերեթում քաղկեդոնականություն ընդունած միաբնակ քրիստոնյաները հայեր էին, հաստատում է Վախուշտին. «(Դինարը,-Հ.Ս.) Հերեթը հայ հերձվածությունից բերեց ուղղափառ հավատի»<sup>59</sup>: Ուրեմն՝ հայ թագավորներով (Ատրներսեհ, Իշխանիկ<sup>60</sup>) կառավարվող խնդրո առարկա նահանգի բնակչությունը հայեր էին, ինչը վկայված է և այլ աղբյուրներում: Հայոց կաթողիկոս և պատմիչ Հովհ. Դրասխանակերտցին, որը արաբների օրոք ապրեց աստանդական կյանքով և հարկադրված էր անընդհատ տեղից տեղ փոխադրվել, գրում է. «Հալածեալ շրջեցայ ի քաղաքէ ի քաղաք ի կողմանս արևելեաց Աղուանից (իմա Հայոց Արևելից կողմանց-Հ.Ս) առ մեծ իշխանն Սահակ (Սևադա-Հ.Ս.) երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու. զի և նոքա ի ժողովրդեցնէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին»<sup>61</sup>: Մեջբերված քաղվածքը անառարկելի փաստ է այն մասին, որ Հերեթ-Շաքիի թե՛ թագավորները և թե՛ ժողովուրդը 48 Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, Երևան, 1996, էջ 220; / Գետազայում՝ Դրասխանակերտցի/:

49 Вахушти Багратиони, История царства Грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н.Т. Накашидзе, Тбилиси, 1976, էջ 126-127, /Գետազայում՝ Вахушти/.

50 Сборник материалов для описания местопостей и племен Кавказа /СМОМПК/, вып. 38, Тифлис, 1908, էջ 57:

51 Նույն տեղում: Նաև Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագա ապստամբութեանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ծեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսավորչի աթոռոյն, Թուղթ Ա, Արարատ, 1879, մարտ, էջ 131:

52 Вахушти, էջ 126-128; Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա /Ե-ԺԲ դարեր/, Երևան, 1934, էջ 203 /Գետազայում՝ Վրաց աղբյուրներ/:

53 Вахушти, էջ 127; Վրաց աղբյուրներ, էջ 203:

54 В. Ф. Минорский, История Шарвана и Дербента X-XI веков, Москва, 1963, էջ 188, ծանոթ. 1

55 Вахушти, էջ 127, Վրաց աղբյուրներ, էջ 203:

56 СМОМПК, вып. 38, էջ 57.

57 Вахушти, էջ 127, Վրաց աղբյուրներ, էջ 203:

58 Н. Я. Марр, Аркаун монгольское название христиан в связи с вопросом об армянах халкедонитах, Византийский временник, Т XII, СПб, 1906, էջ 7:

59 Вахушти, էջ 127:

60 «Իշխանիկ» անվան հայկական ծագումը նկատել և մատնանշել է նաև Ն. Մառը /Տես. նշվ. աշխ., էջ 7/:

61 Դրասխանակերտցի, էջ 220 /ընդգծ. Գ.Ս./:

ըը հայեր էին և հայոց եկեղեցու հետևորդներ:

Հայ պատմիչի հաղորդումը հաստատվում է նաև վրաց աղբյուրների տեղեկություններով: Նրանցից 10-րդ դարում ապրած Անանուն պատմիչը վկայում է, որ 6-րդ դարում քարոզչական նպատակներով Քարթլի-Կախեթի եկած «ասորի հայրերից»<sup>62</sup> Դավիթ Գարեջեցին մի օտարականի հետ խոսել է հայերեն: «Տեսնելով,-գրում է Գարեջեցու վարքի հեղինակը,-սուրբ (Դավթի) ին...օտարազգին (քարքարոսը) դիմեց նրան՝ ասելով. «Ով ես դու». և նա (Դավիթը) պատասխանոց հայերեն (սոմխուրի) լեզվով»<sup>63</sup>: Արևելյան Վրաստանում հայ թագավորների<sup>64</sup> ու հայերենի զանգվածային գործածության մասին նշված տվյալները ամաչառ ուսումնասիրողի մոտ կասկած անգամ չեն առաջացնում, որ նշված տարածաշրջանը բնակեցված է եղել հիմնականում հայերով: Մինչդեռ Ֆ. Մամեդովան, կրկին ընկնելով անուրջների մեջ, ոչ միայն աչք է փակում այդ բացահայտ վկայությունների վրա, այլև իր շինծու «ուշ աղվաններ» տերմինով փորձում է դեմ գնալ փաստերին և «աղվաններ» տեսնել այնտեղ, որտեղ նրանք չէին էլ կարող լինել: Ուստի նրա այն միտքը, թե «աղվանները» 9-19-րդ դարերում ապրում էին «պատմական Աղվանքի» Արցախում և վերջինիս հետ հիշատակվող մյուս նահանգներում, որտեղ էլ, իբրև թե, նրանք վերածնեցին իրենց աղվանական քաղաքական կազմավորումները, նպատակաուղղված է նոր տարածքներ բռնագավթելու համար հող նախապատրաստելուն: Աղբյուրների հեղինակին չի փրկում նաև «պատմական» բառը, որը կարկատանի նման նա կցում է «Աղվանք» տերմինին: Նման բառի գործածությունն անհարիր է «Աղվանքի» համար, քանի որ արևելակովկասյան այդ երկիրը ամփոփված էր վերը նշված սահմաններով<sup>65</sup> մի որոշակի աշխարհագրական տարածքում և այդ շրջանակներում էլ կերտեց սեփական պատմությունը: Մինչդեռ, հիմնվելով Ֆ. Մամեդովայի «մինչև VIII դարը աղվաններն ապրում էին իրենց երկրի ողջ տարածքում, իսկ IX դարից մինչև XIX դարը ներառյալ, պատմական Աղվանքի առանձին մարզերում՝ Արցախում, Սյունիքում, Ուտիքում, Շաքի-Կամբեճանում...» անհիմն հայտարարության վրա, ստացվում է, որ աղվանացիները 8-րդ դարից հետո անհետացել են հեղինակի հորինած ընդարձակ երկրի մի հատվածից և պահպանվել Արցախում և նշված մյուս մարզերում: Հայտնի է, որ վերջիններս (բացառությամբ Շաքի-Կամբեճանի) աշխարհագրորեն գտնվում էին Կուրի աջափնյակում: Այստեղից հետևում է, որ աղվանացիները անհետացել էին այն հատվածից, որն ընկած էր Կուրի ձախ կողմում, այն է՝

Բուն Աղվանքից: Ստացվում է, որ Ֆ. Մամեդովան հաստատում է Կուրի ձախափն-62 «Ասորի հայրերը» տարածված կարծիքի համաձայն «քաղեկոնիկ-երկաբնակներ են եղել, որ եկել են վրաց միաբնակների դեմ պայքարելու» /Տես, վրաց աղբյուրները, էջ 97: Նրանց ինքնության շուրջ առկա տարածայնությունների մանրամասն անդրադարձումները տես նույն տեղում:  
63 վրաց աղբյուրները, էջ 98:  
64 Վախուշտին պատմում է, որ 3երեթը 11-րդ դարի սկզբին նվաճվում է Կախեթի կորիկոս Բագրատի կողմից և միացվում նրան: Բագրատին հաջորդում է Կվիրիկե(Կյուրիկե) Մեծը, որն էլ ավելի է ամրապնդում միացյալ իշխանությունը և մայրաքաղաք /գահանիստ քաղաք/ դարձնում Թելավին: Կվիրիկեի մահից հետո, որը ժառանգ չուներ, 3երեթ-Կախեթի թագավոր է դառնում նրա որդեգիրը՝ Գագի անունով: Վերջինս Կվիրիկեի քրոջ և Սամշվիլոեի հայ թագավոր Դավիթի որդին էր: /Вакхшати, էջ 129/: Նույն տեղեկությունը ավելի հստակորեն բերում է 11-րդ դարի վրաց Անանուն պատմիչը. «Թագավոր էր Կախեթում(Կախեթում) Գագիկը՝ Սամշվիլոեի և Ջորակերտի (Ջորակերտի-Ջորագետի,-Յ. Ս.) տոնեխների (հայոց,- Յ.Ս.) Դավիթ թագավորի որդին [ և ] Կորիկեյի (Կվիրիկեյի) քեռորդին»: Տես վրաց աղբյուրները, էջ 205: Վրացի պատմիչների այս հաղորդումները ցույց են տալիս, որ հայ տարրը 11-րդ դարում էլ տարածաշրջանի քաղաքական կյանքում շարունակվում էր ունենալ իր լուրջ դերակատարությունը:

65 Տես Ժանոթ. 43:

յակից աղվանական ցեղերի վերացման փաստը: Դա տեղի է ունենում ձուլման հետևանքով, իսկ վերջինս մի այնպիսի գործընթաց էր, որ ընդգրկելու էր նրանց բոլորին՝ անկախ բնակության վայրից, լինելու դա ձախափնյակում թե աջափնյակում, հետևաբար՝ աջափնյակում ապրողները նույնպես պետք է ձուլված-վերացած լինեին: Բայց բերված քաղվածքի շարունակության մեջ հեղինակի պնդումը, թե «աղվանները» պահպանվել են աջափնյակում գտնվող մարզերում, ինչը ցույց է տալիս, որ պահպանվածները չէին կարող լինել նույն ցեղերից, հակառակ պարագայում նրանք ևս արաբական տիրապետության շրջանում կձուլվեին ու կվերանային: Այստեղից էլ միակ իրական եզրակացությունը. Արցախը, Ուտիքն ու Սյունիքը բնակեցված էին աղվանացիներից որակապես միանգամայն տարբեր ժողովրդով, այն է՝ աղբյուրների հավաստի տեղեկություններից ելնելով՝ հայերով: Ի տարբերություն աղվանական ցեղերի, հայերը գտնվում էին տնտեսական, հասարակական ու քաղաքական զարգացման ավելի բարձր մակարդակի վրա, ունեին էթնիկապես միատարր կազմ, միասնական լեզու և այդ լեզվով ստեղծված հոգևոր բարձրարժեք մշակույթ, որոնք ապահովում էին նրանց ամեն կարգի արտաքին միջամտություններից ու պայմանավորում շարունակական գոյատևումը՝ իրենց հայ նախնիների օրրաններում:

Այսպիսով, Ֆ. Մամեդովան որքան էլ ջանում է խեղել իրականությունը և թաքցնել ճշմարտությունը, ինքն էլ դա չնկատելով, բացահայտում է այն: Երիցս ճիշտ էր հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին, երբ գրում էր. «Ոչ էր պարտ ծածկել ճշմարտութեանն և ընդ փակմամբ լինել լուսոյ»<sup>66</sup> («Ճշմարտությունը չէր կարող ծածկված մնալ, և լույսը փակի տակ լինել»):

Սրանով վերջակետ դնելը չի նշանակում թե նշվածներով ավարտվում են Ֆ. Մամեդովայի ոտնձգությունները հայ ժողովրդի, նրա պատմության ու հոգևոր մշակույթի նկատմամբ: Հայաստյաց հետազոտողի հիմնական նպատակը, որը «կարմիր թելի» նման անցնում է նրա գրքի բոլոր էջերով, առանց միջոցների մեջ խտրություն դնելու, Բուն Աղվանքի իրական սահմանների ուռճացումն է և աղվանացիների գոյատևման ժամանակաշրջանի երկարաձգումը այդ արհեստականորեն ընդարձակված տարածաշրջանում, ինչպես նաև նրանց համար բեղուն պատմական անցյալի պատկերումն է ու հայերի ստորադասումը աղվանացիներիին:

Սրանով աղբյուրներից հեղինակը իր երկրի կառավարողների ներկա քաղաքական շահախնդրություններն ու նպատակները տեղափոխում է անցյալի գիրկը՝ լինելով ոտնահարելով պատմականության սկզբունքը: Ֆ. Մամեդովան փորձում է նպատակակետին հասնել փաստերի քմահաճ մեկնաբանություններով, աղավաղումներով ու անսքող կեղծիքներով:

Ուստի որպես վերջաբան արձանագրենք, որ «Կովկասյան Ալբանիան ու ալբանները» գիրքը թերևս կարող է հագուրդ տալ հեղինակի և Հայաստանի ու հայության հանդեպ անլիարժեքության բարդույթով տառապող նրա հայրենակիցների ազգայնամոլական ձգտումներին՝ այժմ արդեն գրչի միջոցով շարունակելով թուրք-թաթարական հորդանների թալանչիական ու զավթողական նկրտումները:

<sup>66</sup> Կաղանկատվացի, էջ 11: Աշխարհաբար թարգմանությունը տես Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ., առաջաբանը և ծանոթ., Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 7:

## Summary

# HISTORICAL SOURCES OF THE GARABAGIAN CAUSES The legend of «late albains»

HENRIK S. SVAZYAN

The state of Azerbaijan appeared on the historic arena only on 1918. During existence of the USSR the heirs of the Caucasian Tatars got artificial name Azerbaijanis on that basis. As a result of the illegal decision (July 5, 1921) of the Caucasian Bureau RC(B)P, Mountainous Karabakh was forcibly annexed to Soviet Azerbaijan. It was a political pretext of treating the ancient and medieval history of the Great Armenia's regions of Artsakh and Utik as a target for attacks by the Azerbaijani falsifiers of history. As far as it had been impossible to find a historic justification for the annexation of the Armenian territories by comparison with Armenia and Armenian centuries-old history, thus the historians of Soviet Azerbaijan, following the experience of Cermalist Turkey, started to appropriate the history of proper Aluank and the Albanian tribes which disappeared from the historic arena after the 8th century.

After Azerbaijan became independent, notorious Azerbaijani falsificator F.Mamedova published a monography *Caucasian Albania and Albanians* (Baku, 2005, in Russian) where she continued and deepened this falsifying shrewdness. F.Mamedova, through absolute falsification of historic data, called the Armenian population of Utik and Artsakh, which ethnically had no relation to the Albanian tribes, by the artificial term *late Albanians* and tried to prolong the latter's history up to 19th century. Such an approach is basically contradictory not only to the data of the Armenian, but also Arabic (Ibn al-Asir, al-Dinavari, Yakubi, Tabari and others), Byzantine (Constantine Porphyrogenitus) and other sources.